ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
INTERNATIONAL FUND FOR AGRICULTURAL DEVELOPMENT

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (ԳԶՄՀ) հիմնադրվել է 1977 թվականին: ԳԶՄՀ-ն Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված կազմակերպություն է, որի հիմնական նպատակն է զարգացող երկրներում գյուղական բնակչության շրջանում աղքատության դեմ պայքարը:

ԳԶՄՀ ունի 177 անդամ պետություն: ԳԶՄՀ-ի միջոցները գոյանում են անդամ և այլ պետությունների ու կազմակերպությունների կամավոր ներդրումներից: Հայաստանի Հանրապետությունը ԳԶՄՀ-ին անդամակցում է 1993 թվականից, գտնվում է զարգացող երկրների (c2) ցուցակում:

ՀՀ և ԳԶՄՀ միջև համագործակցության շրջանակներում 1995 թվականից ի վեր ԳԶՄՀ-ի միջոցներով Հայաստանի Հանրապետությունում իրականացվել և իրականացվում է թվով 7 ծրագիր՝ 89.51 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ: ԳԶՄՀ-ի փորձը ցույց է տվել, որ գյուղատնտեսությանն էական աջակցության տրամադրումը արդյունավետ միջոց է աղքատության արագ կրճատման համար: Այդ միջոցները հատկապես կենտրոնացվում են երկրի ամենաաղքատ գյուղական շրջանների վրա, հիմնականում՝ բարձրադիր և սահմանամերձ շրջաններում: Ներդրումների նպատակը՝ արտադրության և արտադրողականության ավելացումն է մասնավոր հատվածի զարգացման միջոցով, ինչը դիտարկվում է որպես աղքատության կրճատման հիմնական գործիք:

ԳԶՄՀ-ի աջակցությամբ Հայաստանի Հանրապետությունում ներկայումս իրականացվում է «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիրը», որի նպատակն է բարելավել բնակչության տնտեսական և սոցիալական կարգավիճակը՝ Ծրագրի իրականացման տարածքում ստեղծելով եկամտի աճի և զբաղվածության կայուն հնարավորություններ: